ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մ. Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը կապիտալի դեմ մղվող պայքարում բարձր են գնահատել բանվորական հեղափոխական արհմիությունների դերը՝ որպես աշխատավորների ամենամասսայական կազմակերպությունների։ Կ. Մարքսը գրել է. «Անգլիայում բանվորները չսահմանափակվեցին մասնակի կոալիցիաներով, որոնք ուրիշ նպատակ չունեին, բացի անցողիկ գործադուլից, և որոնք չքանում են այդ գործադուլի հետ միասին։ Ստեղծվեցին մշտական միություններ, տրեդ-յունիոններ, որոնք բանվորների պատվար են ծառայում նրանց պայքարում՝ ընդդեմ ձեռնարկատերերի»[1]։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից արհմիությունների դերի գնահատման առումով բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում նրանց դիմումը գերմանական «Կոմունիստների միությանը», որով պահանջվում էր չթուլացնել ազդեցությունը բանվորական մասսայական կազմակերպությունների վրա։ Կ. Մարքսը առաջինն էր, որ արհմիությունները որակեց որպես «կազմակերպված ուժ վարձու աշխատանքի բուն սիստեմի և կապիտալի իշխանության ոչնչացման համար»[2]։

Բանվորական արհմիությունների մասին մարքսիստական ուսմունքն իր հետագա զարգացումը գտավ արհմիութենական շարժման վերաբերյալ լենինյան ուսմունքի մեջ։ Վ. Ի. Լենինը բարձր է գնահատել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի դերը արհմիությունների վերաբերյալ տեսության մշակման գործում։ Նա խոսելով բանվորական կոալիցիաների նկատմամբ Կ. Մարքսի դիրքորոշման մասին, նշել է. «Այստեղ մեր առաջ է տնտեսական պայքարի և պրոֆեսիոնալ շարժման մի քանի տասնամյակների ծրագիրն ու տակտիկան, պրոլետարիատի ուժերը «գալիք ճակատամարտի համար» նախապատրաստելու ամբողջ երկարատև դարաշրջանի համար»[3]։

Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս քաղաքական բնույթի բանվորական ինտերնացիոնալ հեղափոխական արհմիությունների կազմակերպմանը և բարձր էր գնահատում նրանց դերը սովետական իշխանության հաղթանակի, սովետական պետության ամրապնդման, ձեռք բերված նվաճումների պաշտպանության և սոցիալիստական շինարարության կազմակերպման բնագավառում։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ առանց արհմիությունների հնարավոր չէր լինի ոչ նվաճել, ոչ էլ պահպանել պրոլետարիատի դիկտատուրան։ Նա

---

1 Կ. Մարքս, Փիլիսոփայության աղքատություն, Երևան, 1948, էջ 188։

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, М., 1960, стр. 200.

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 83։

պաշտպանում էր գերմանական բուրժուական դեմոկրատ Ի. Յակոբինի կարծիքն այն մասին, որ բանվորական արհմիության հիմնումն ավելի մեծ նշանակություն ունի, քան Սադովայի ճակատամարտը։ Ահա թե ինչու նա սոցիալ-դեմոկրատներից պահանջում էր մտնել արհմիությունների մեջ և նրանցում պրոպագանդել մարքսիզմը։ Վ. Ի. Լենինը գրում էր. «Հին պրոֆմիությունները, ինչպես և ամեն մի պրոֆմիություն, ունեն իրենց պատմությունն ու անցյալը։ Այդ անցյալում նրանք դիմադրության օրգաններ էին նրա դեմ, ով կեղեքում էր աշխատանքը, կապիտալիզմի դեմ»[4]։ Ամեն անգամ ելնելով ստեղծված իրադրության կոնկրետ ու խոր վերլուծությունից, նա հիմնավորում էր արհմիությունների դերն ու խնդիրները, ցույց տալիս, որ «այդ կազմակերպությունը պետական կազմակերպություն չէ, դա հարկադրանքի կազմակերպություն չէ, դա դաստիարակիչ կազմակերպություն է, ներգրավման, ուսուցման կազմակերպություն է, դա դպրոց է, կառավարման դպրոց, տընտեսավարման դպրոց, կոմունիզմի դպրոց»[5]։

Վ. Ի. Լենինը ապացուցում էր, որ «պրոֆմիությունները ծագել են կապիտալիզմից, որպես նոր դասակարգի զարգացման միջոց»[6]։ Այդ երևույթը տեղի է ունեցել հետևյալ ձևով. «Խավար, անգիտակից գյուղացիները, առաջին անգամ ընկնելով լավ սարքավորված և նորագույն տեխնիկայի հրաշալիքներով օժտված մի ֆաբրիկա, տարակուսանքի մեջ էին ընկնում, իրենց ճնշված էին զգում ֆաբրիկայի արտասովոր շքեղությունից։ Գյուղացու տգետ հոգին ֆաբրիկանտի մեջ տեսնում էր իր բարերարին, կերակրողին, որն աշխատանք է տալիս, առանց որի ապրուստ չի ունենա բանվորը։ Խուլ ու ետ ընկած գյուղական կյանքից դուրս եկած անօգնական բանվորը, ընկնելով ֆաբրիկայի եռացող կաթսայի մեջ, որտեղ նա ստանում էր գոյության ավելի տանելի պայմաններ և մի կերպ կերակրվելու հնարավորություն, ընկնում էր կապիտալիստական շահագործման ճնշող լծի տակ։ Բոլորին լավ հայտնի է, թե ինչպես են ապրել Ռուսաստանի և մյուս երկրների բանվորները այդ ծանր ժամանակը։ Եվ ահա մենք տեսնում ենք, թե ինչպես հետզհետե ազատագրվում է բանվորը իր գյուղացիական հետամնացությունից ու ծեծկվածությունից և սկսում է զարգացման ավելի բարձր աստիճանի վրա բարձրանալ, թե ինչպես են երևան գալիս հարստահարողների դեմ մղվող պայքարի առաջին փորձերը՝ գործադուլները, պրոլետարական ցիրուցան մասսաների՝ պրոֆեսիոնալ միությունների մեջ կազմակերպվելու փորձերը...»[7]։ Բանվորների մեջ սկսում է զգացվել գործադուլների անհրաժեշտությունը, որը նրանց սովորեցնում էր գիտակցել, որ ուրիշ բանվորների հետ միավորվելու մեջ կա մի ուժ, որ կարող է կանգնեցնել մեքենաները, ստրուկին ազատ մարդ դարձնել և օգտվել այն բարիքներից, որոնք իրավամբ պատկանում են դրանք արտադրողներին։ Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ «պրոֆմիությունները բանվոր դասակարգի վիթխարի պրոգրեսն էին կապիտալիզմի զարգացման սկզբում, որպես անցում բանվորների մանրատվածությունից և անօգնական վիճակից դեպի դասակարգային միավորման սաղմերը»[8]։

---

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 588։
5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 2։
6 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 655։
7 Նույն տեղում, էջ 665։
8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 43։

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ կապիտալի դեմ դասակարգային պայքար մղելու համար բանվորները պետք է ունենան ոչ միայն իրենց քաղաքական առաջնորդը՝ կուսակցությունը, այլև արհմիությունները, որոնք բանվորներին կարող են կապել կուսակցության հետ։ Նա արհմիությունները համարում էր ոչ միայն գիտական կոմունիզմի գաղափարները բանվորներին ուսուցանող կազմակերպություններ, այլ նաև կապիտալիստներին բանվորներին ենթարկել տալու միջոց։ Խոսելով XIX դ. 70-ական թվականներին Անգլիայում ստեղծված դրության մասին, նա գտնում էր, որ «Անգլիայում կապիտալիստների ենթարկվելը բանվորներին այն ժամանակ կարող էր ապահովվել հետևյալ հանգամանքներով՝ (1) գյուղացիություն չլինելու հետևանքով բնակչության մեջ բանվորների, պրոլետարների լիակատար գերակշռությամբ... (2) պրոլետարիատի գերազանց կազմակերպվածությամբ պրոֆեսիոնալ միությունների մեջ (հիշյալ տեսակետով Անգլիան այն ժամանակ աշխարհում առաջին երկիրն էր)...»[9]։

Վ. Ի. Լենինը հանճարեղորեն նկատում էր, որ կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում ևս անխուսափելի է դարձնում արհմիությունների կազմակերպումը։ Դեռևս 1895 թ. նա արհմիությունների կազմակերպումը համարում էր ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցության պահանջներից մեկը։ Նա նշում էր, որ արհմիութենական կազմակերպությունները ոչ միայն կարող են վիթխարի օգուտ բերել տնտեսական պայքարի ամրապնդման և զարգացման գործում, այլև դառնալ քաղաքական ագիտացիայի կարևոր միջոց[10]։

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Ռուսաստանի արհմիություններն իրենց կազմակերպման առաջին իսկ օրվանից կարևոր զենք դարձան բոլշևիկների կուսակցության ձեռքում՝ բանվորների մեջ սոցիալիստական գաղափարներն ամրապնդելու և նրանց տնտեսական ու քաղաքական պայքարը նոր նպատակի ուղղելու գործում։ Վ. Ի. Լենինը հստակորեն մշակել է բանվորական ինտերնացիոնալ հեղափոխական արհմիությունների կառուցման պլանը և գտել, որ արհեստակցական պայքարը «պահանջում է միավորում ըստ բանվորների պրոֆեսիաների, այլ ոչ թե միայն ըստ նրանց աշխատավայրի»[11]։

Այդպիսով, Ռուսաստանում արհմիությունները դեռ չէին կազմակերպվել, երբ Վ. Ի. Լենինը մշակում էր նրանց ստեղծման պլանը և գործունեության հիմնական սկզբունքները։ Զարգացնելով այդ ուսմունքը, նա մշակում էր նաև արհմիությունների նկատմամբ սոցիալ-դեմոկրատների վերաբերմունքի հարցը։ Հանճարեղ առաջնորդը գտնում էր, որ ամեն մի սոցիալ-դեմոկրատ բանվոր պետք է աջակցի արհմիություններին, ակտիվ կերպով աշխատի նրանցում։ Սակայն Վ. Ի. Լենինը դրանով ամենևին այն միտքը չէր հայտնում, թե միայն սոցիալ-դեմոկրատները կարող են լինել արհմիությունների անդամ, հանգամանք, որը կնեղացներ մասսաների վրա նրանց ազդեցության շրջանակը։ Նա գրում էր. «Թող ամեն մի բանվոր, որ ըմբռնում է միավորման անհրաժեշտությունը տերերի և կառավարության դեմ պայքարելու համար, մասնակցի համքարային միության (խոսքը արհմիությունների մասին է— Մ.

9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 419։
10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 607։
11 Նույն տեղում, էջ 654։

Ս.)։ Համքարային միությունների բուն նպատակն անհասանելի կլիներ, եթե նրանք չմիացնեին բոլոր նրանց, ում մատչելի է ըմբռնման թեկուզ միայն այդ տարրական աստիճանը, եթե այդ համքարային միությունները չլինեին շատ լայն կազմակերպություններ»[12]։ Վ. Ի. Լենինը զտնում էր, որ որքան լայն լինեն այդ կազմակերպությունները, այնքան ավելի մեծ կլինի սոցիալ-դեմոկրատների ազդեցությունը նրանց վրա։ Եվ քանի որ կազմակերպության լայն կազմի դեպքում անկարելի էր խիստ կոնսպիրացիան, ուստի հակասություն էր առաջանում վերջինիս անհրաժեշտության և կազմակերպությունների լայն կազմի պահանջի միջև։ Դա վերացնելու և արհմիություններն ըստ կարելույն ավելի պակաս կոնսպիրատիվ դարձնելու նպատակով Վ. Ի. Լենինը նշում էր հնարավոր երկու ուղի և պաշտպանում դրանցից երկրորդը։ Նա գրում էր. «կա՛մ համքարային միությունների լեգալացում (որ մի քանի երկրներում նախորդել է սոցիալիստական և քաղաքական միությունների լեգալացմանը), կա՛մ պահպանումն գաղտնի կազմակերպության, բայց այնքան «ազատ», քիչ-ձևավորված, lose, ինչպես ասում են գերմանացիները,— որպեսզի անդամների մասսայի համար այդ կոնսպիրացիան հավասարվի համարյա զրոյի»[13]։

1905 թ. Ռուսաստանում սկսում են կազմակերպվել առաջին բանվորական կամ ինտերնացիոնալ հեղափոխական արհմիությունները, որոնց կազմակերպմանն ու գործունեությանը բոլշևիկներն ակտիվ մասնակցություն են ունենում։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ ի տարբերություն եվրոպական երկրների, Ռուսաստանում «պրոֆեսիոնալ միությունները քաղաքական բնույթ են ընդունում»[14]։ Դա բացատրվում էր նրանով, որ Ռուսաստանում քաղաքական պայքարը միաձուլվում էր տնտեսականի հետ։ 1905 թ. Դեկտեմբերյան զինված ապստամբությանը բոլշևիկների ղեկավարությամբ ակտիվ մասնակցություն ունեցան նաև արհմիությունները։ Սակայն ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո ռեակցիան ավելի ուժգնորեն հարձակվեց բանվոր դասակարգի և նրա կազմակերպությունների վրա։ Ցարական կառավարությունը ջանում էր ջախջախել բանվորական արհմիությունները։

1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո և հատկապես 1907 թ. կեսերին արհմիությունների նկատմամբ կուսակցության վերաբերմունքի հարցը հսկայական նշանակություն ուներ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի ղեկավարման համար։ Երկրորդ Պետական դուման ցրելուց հետո հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի առջև ավելի մեծ բարդությամբ ծառացավ արհմիություններում աշխատելու անհրաժեշտության հարցը։ Ճիշտ է, ՌՍԴԲԿ V համագումարը սկզբունքորեն լուծել էր արհմիությունների նկատմամբ սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքի հարցը, սակայն որքան ավելի էր ծավալվում ռեակցիան, այնքան ավելի էր մեծանում լեգալ միությունների օգտագործման պահանջը։ Հունիսերեքյան ռեֆորմից հետո լեգալ հնարավորությունների օգտագործումը կարևորագույն պայման էր հեղափոխության նոր վերելքի նախապատրաստման համար։ Արհմիությունները, որպես լեգալ կազմակերպություններ, լայն հնարավորու-

12 Նույն տեղում, էջ 604։

13 Նույն տեղում։

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 80։

թյուններ էին ստեղծում կուսակցության և ժողովրդական զանգվածների միջև կապը պահպանելու և ամրապնդելու համար։

1907 թ. հուլիսին Վ. Ի. Լենինը գրում է «Բանաձևի նախագծի ուրվագիր՝ արհեստակցական միությունների Համառուսաստանյան համագումարի մասին», և պահանջում, որ կուսակցության բոլոր անդամները պայքարեն արհմիությունների վերաբերյալ ՌՍԴԲԿ V համագումարի բանաձևի կենսագործման համար, այսինքն՝ պայքար մղեն ընդդեմ նրանց չեզոքացման։ Վ. Ի. Լենինը պահանջում էր, որպեսզի կուսակցության յուրաքանչյուր անդամ միաժամանակ լինի արհմիության անդամ։ Նրա առաջարկությամբ Շտուտգարտի միջազգային սոցիալիստական կոնգրեսի (1907 թ. օգոստոսի 18—23) բանաձևում արձանագրվում է. «Պրոլետարիատի լիակատար ազատագրության համար մտավոր, քաղաքական և տնտեսական ստրկությունից՝ անհրաժեշտ է բանվոր դասակարգի ինչպես քաղաքական, այնպես և նույն չափով տնտեսական կռիվը. կուսակցության և արհմիությունների նշած խնդիրները նույնչափով էլ կարևոր են պրոլետարիատի ազատագրական կռվի համար... պրոլետարական դասակարգային կռվի... հաջողությունը... կարող է ձեռք բերվել կուսակցության և արհմիութենական կազմակերպությունների միակամ համաձայնեցրած գործողության դեպքում միայն։ Դրա համար էլ պրոլետարիատի կռիվը ավելի արդյունավետ կլինի ու ավելի հաջող այն չափով, որ չափով սերտ կլինի արհմիությունների և կուսակցական կազմակերպությունների կապը... Բանվոր դասակարգը պետք է ձգտի, որ բոլոր երկրներում ստեղծվի ու ամրապնդվի սերտ կապ կուսակցության ու արհմիությունների միջև»[15]։

Արհմիություններում կուսակցական աշխատանքն ուժեղացնելու միտքը Վ. Ի. Լենինը հստակորեն ընդգծում էր նաև 1907 թ. նոյեմբերին։ Նա գրում էր. «Հիմա գործունեությունը արհեստակցական միություններում, անկասկած, հսկայական նշանակություն է ձեռք բերում։ Ի հակադրություն մենշևիկների չեզոքականությանը՝ մենք պետք է այդ գործունեությունը վարենք միությունները կուսակցության հետ մոտեցնելու, սոցիալիստական գիտակցականություն զարգացնելու և պրոլետարիատի հեղափոխական խնդիրները ըմբռնելու ոգով»[16]։

1908 թ. փետրվարի 13-ին (26-ին) «Պրոլետարի» թերթում տպագրվում է ՌՍԴԲԿ Կենտկոմի բանաձևը արհմիությունների մասին, որով կուսակցության անդամներին առաջարկվում էր այդ կազմակերպությունների ներսում ստեղծել կուսակցական խմբեր և աշխատել տեղական կուսակցական կենտրոնների ղեկավարությամբ։ Այն դեպքերում, երբ ոստիկանական հալածանքները հնարավորություն չէին տալիս կազմակերպելու կամ վերստեղծելու քայքայված արհմիությունները, Կենտկոմն առաջարկում էր այդպիսիները կազմակերպել անլեգալ։ Կենտկոմի այդ բանաձևի հիմքում դրված էր Վ. Ի. Լենինի «Արհմիությունների չեզոքությունը» հոդվածը, որտեղ ասված է, որ «...միությունների պարտիականությանը պետք է հասնել բացառապես միությունների ներսում ս.-դ. աշխատանքով, որ ս.-դ. պետք է կազմակերպեն համախմբված բջիջներ միությունների ներսում, որ պետք է հիմնել անլեգալ միություններ, քանի որ անհնարին են լեգալ միությունները»[17]։

---

15 М. Луценко, Профсоюзы, партия и Советская власть, М., 1929, стр. 21—22.

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 202։

17 Նույն տեղում, էջ 592։

Վ. Ի. Լենինի ցուցումները կենսագործվում են։ Ժանդարմական դեպարտամենտի ոչ լրիվ տվյալներով 1908 թ. սկզբներին Ռուսաստանում գոյություն ունեին 95 անլեգալ արհմիություններ։ Ղեկավարվելով առաջնորդի ցուցումներով, բոլշևիկները լայն աշխատանք են ծավալում իրենց ազդեցությունն արհմիությունների վրա տարածելու համար։ Ռեակցիայի տարիներին Ռուսաստանում կային նաև որոշ լեգալ արհմիություններ։ Վ. Ի. Լենինի ցուցումներով բոլշևիկները աստիճանաբար արհմիություններից դուրս էին մղում լիկվիդատորներին և ազդեցիկ ուժ դառնում գրանցում։ Այս կապակցությամբ Վ. Ի. Լենինը 1919 թ. հոկտեմբերի 10-ին իտալական, ֆրանսիական և գերմանական կոմունիստներին ուղղված ողջույնի նամակում գրել է. «Մենք մասնակցում էինք ամենառեակցիոն պրոֆեսիոնալ-արհեստակցական միություններին, որոնք զուտ մենշևիկյան էին, որոնք ոչնչով (կոնտրռևոլյուցիոնականությամբ) չէին զիջում Լեգինի, Գերմանիայի ամենաստոր և ամենառեակցիոն պրոֆեսիոնալ արհեստակցական միություններին»[18]։

Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ «պետք է անպատճառ սովորել լեգալ կերպով աշխատել ամենառեակցիոն պառլամենտներում, ամենառեակցիոն պրոֆեսիոնալ, կոոպերատիվ, ապահովագրական և նման կազմակերպություններում»[19]։

Ռուսաստանում սկսված հեղափոխական նոր վերելքի տարիներին արհմիությունների շարքերն աճում էին։ Եթե 1909 թ. վերջին Ռուսաստանում հաշվվում էր արհմիության 13 հազար անդամ, ապա 1912 թ.՝ 15, իսկ 1913 թ.՝ 45 հազար։ Հեղափոխության վերելքի տարիներին ևս Վ. Ի. Լենինը շարունակում էր մեծ ուշադրություն դարձնել արհմիութենական հարցերին, գտնելով, որ «բանվորական կազմակերպությունները և առաջին հերթին բանվորների պրոֆեսիոնալական միությունները, պրոլետարիատի ավելի ու ավելի մեծ մասսա ներգրավելով կազմակերպված պայքարի մեջ, բանվորների հակահարվածը դարձնում են ըստ հնարավորության ավելի պլանաչափ և սիստեմատիկ։ Մասսայական և բազմատեսակ պրոֆեսիոնալական միությունների պարագայում գործադուլային պայքարն ավելի համառ է դառնում. գործադուլներն ավելի սակավ են տեղի ունենում, բայց ավելի խոշոր է լինում յուրաքանչյուր ընդհարումը»[20]։

Հեղափոխության վերելքի տարիներին բանվորական շարժման ինտերնացիոնալ միասնության խնդիրն աչքի ընկնող տեղ էր գրավում Վ. Ի. Լենինի գրեթե բոլոր ասույթներում։ Նա սոցիալ-դեմոկրատների հիմնական խնդիրն էր համարում «...բոլոր ազգությունների բանվորների միածուլման իրականացումը առանց բացառության պրոլետարական բոլոր կազմակերպություններում (քաղաքական, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ, լուսավորական և այլն, և այլն)»[21]։ Բուրժուական ազգայնականության դեմ պայքարելու համար նա անհրաժեշտ պայման էր համարում «...բոլոր ազգերի բանվորների կատարյալ ձուլումն բոլոր բանվորական՝ պրոֆեսիոնալ, կոոպերատիվ, սպառողական, լուսավորական և ուրիշ ամեն կազմակերպություններում, որպես հակա-

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 53։
19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 14։
20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 253։
21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 297։

կշիռ ամեն տեսակի բուրժուական նացիոնալիզմի»[22]։ Այդ անհրաժեշտ էր դեմոկրատիան, ինչպես նաև կապիտալի դեմ բանվորների շահերը պաշտպանելու համար։ Վ. Ի. Լենինը նշել է. «ով կամենում է ծառայել պրոլետարիատին, նա պետք է միավորի բոլոր ազգերի բանվորներին, անշեղորեն պայքարելով թե «իր» և թե օտար նացիոնալիզմի դեմ»[23]։ Ազգային արհմիությունների ջատագովներին նա անվանում էր ազգայնական քաղքենիներ։ Նա նշում էր. «Ամեն մի իսկապես լուրջ և խոր քաղաքական հարցում խմբավորումը տեղի է ունենում ըստ դասակարգերի, և ոչ թե ըստ ազգերի»[24]։

Այդպիսով, արհմիությունների վերաբերյալ լենինյան ուսմունքը կազմում էր նաև ազգային հարցի լենինյան ծրագրի բաղկացուցիչ մասը և ուներ միջազգային նշանակություն։ Այն ուղղված էր ոչ միայն էսէռների ու լիկվիդատորների, այլև Երկրորդ ինտերնացիոնալի կուսակցությունների արատավոր տեսության ու պրակտիկայի դեմ։

Սակայն դեպքերի ընթացքը փոխում է 1914 թ. սկսված առաջին համաշխարհային պատերազմը։ 1920 թ. Վ. Ի. Լենինը գրել է. «Սոց. պարտիաների, պրոֆ. միությունների, բանվորական կոոպերատիվների բոլոր առաջնորդները, բոլոր ականավոր ներկայացուցիչները, որոնք 1914—1918 թվականների պատերազմում «հայրենիքի պաշտպանության» կողմնակից էին, վարվեցին որպես սոցիալիզմի դավաճաններ»[25]։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցարիզմը դաժան դատաստան տեսավ նաև արհմիությունների նկատմամբ։ Լեգալ հնարավորություններից զրկված շատ արհմիություններ հարկադրված եղան անցնելու անլեգալ աշխատանքի։ Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, բոլշևիկյան կազմակերպություններն այդ տարիներին սերտ կապ են ստեղծում արհմիությունների հետ, նրանց միջոցով մղում հակապատերազմական ագիտացիա, կազմակերպում բանվորական ժողովներ, գործադուլներ և այլն։

Արհմիութենական կազմակերպությունների և ֆաբրիկա-գործարանային կոմիտեների ստեղծումը լայն թափ ստացավ 1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո։ Վ. Ի. Լենինի ցուցումներով տերիտորիալ հատկանիշներով արհմիութենական կենտրոնական բյուրոներ են ստեղծվում, որոնք մեծ օգնություն են ցույց տալիս արհմիութենական տեղական կանոնադրությունների մշակմանը։ Վ. Ի. Լենինը բոլշևիկներին խորհուրդ էր տալիս պայքարել ամենից առաջ խոշոր, արդյունաբերական կենտրոնացված արհմիություններ կազմակերպելու համար, քանի որ առաջին հերթին դրանք էին ընդունակ պաշտպանելու պրոլետարիատի ընդհանուր դասակարգային շահերը։ Վ. Ի. Լենինը դեմ էր նեղ, ցեխային և տրեդյունիոնիստական արհմիությունների ստեղծմանը, որին ձգտում էին էսէռա-մենշևիկյան կուսակցությունները և բուրժուական ու մանրբուրժուական հոսանքները։ Վ. Ի. Լենինը այն կարծիքն էր հայտնում, որ հենց այդ պատճառով ավելի առաջավոր երկրներում, քան Ռուսաստանն էր, արհմիությունների որոշ ռեակցիոնությունն արտահայտվել է և պետք է արտահայտվեր, անկասկած,

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 7։
23 Նույն տեղում, էջ 11։
24 Նույն տեղում, էջ 26։
25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 448։

շատ ավելի ուժեղ։ Ռուսաստանում մենշևիկները ևս արհմիությունների մեջ հենարան ունեին հենց շնորհիվ ցեխային սահմանափակության, արհեստակցական էգոիզմի, օպորտունիզմի։

1917 թ. մայիսի 30-ից մինչև հունիսի 3-ը Պետրոգրադում տեղի ունեցած ֆարգործարկոմների առաջին կոնֆերանսին մասնակցում էր նաև Վ. Ի. Լենինը։ Այդ կոնֆերանսում նա նշեց, որ տնտեսական «աղետից փրկվելու ուղին միմիայն պրոդուկտների արտադրության և բաշխման նկատմամբ իսկապես բանվորական վերահսկողություն սահմանելու մեջ է»[26]։ Նման վերահսկողության համար նա անհրաժեշտ պայման էր համարում նաև այն, որ «ֆաբրիկային և գործարանային կոմիտեները, բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների կենտրոնական և տեղական Սովետները, նույնպես և պրոֆեսիոնալ միությունները, իրավունք ստանան մասնակցելու վերահսկողությանն այնպես, որ նրանց համար բաց լինեն բոլոր առևտրական ու բանկային մատյանները և որ բոլոր տվյալները պարտադրապես հաղորդվեն նրանց»[27]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո էլ Վ. Ի. Լենինը մեծ տեղ էր տալիս արհմիությունների գերին ու նշանակությանը։ Սովետական իշխանության հաղթանակի առաջին իսկ օրերին գրած իր նախագծերում, ելույթներում ու ճառերում Վ. Ի. Լենինը քանիցս անդրադառնում էր արհմիությունների հարցին։ 1917 թ. հոկտեմբերի վերջին նա գրել է. «1. Պետական, հասարակական ու մասնավոր-արդյունաբերական խոշոր ծավալի (5-ից ոչ պակաս թվով վարձու բանվորներ ունեցող) ձեռնարկությունների բոլոր ծառայողները պարտավորվում են կատարել իրենց հանձնարարված գործերը և առանց կառավարության, բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների Սովետների կամ պրոֆեսիոնալ միությունների հատուկ թույլտվության չլքել իրենց պաշտոնը»[28]։ Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանությունը նվաճելուց հետո «...կուսակցությանը հարկ է լինում էլ ավելի ու նոր ձևով... դաստիարակել արհմիությունները, ղեկավարել նրանց, դրա հետ միասին, սակայն, չմոռանալով, որ նրանք մնում են և դեռ երկար ժամանակ կմնան որպես անհրաժեշտ «կոմունիզմի դպրոց» ու նախապատրաստական դպրոց, որպեսզի պրոլետարներն իրագործեն իրենց դիկտատուրան՝ որպես բանվորների անհրաժեշտ միավորում, որպեսզի երկրի ամբողջ տնտեսության կառավարումն աստիճանաբար անցնի բանվոր դասակարգի (և ոչ թե առանձին պրոֆեսիաների) և ապա բոլոր աշխատավորների ձեռքը»[29]։

Վ. Ի. Լենինը բարձր է գնահատել արհմիությունների դերը քաղաքացիական պատերազմի տարիներին։ «Առանց արհմիությունների հետ ամենասերտ կապ ունենալու,— գրել է Վ. Ի. Լենինը 1920 թ.,— առանց նրանց ջերմ աջակցության, առանց նրանց ամենաանձնուրաց աշխատանքի՝ ո՛չ միայն տնտեսական, այլև ռազմական շինարարության մեջ մենք, հասկանալի է, ոչ միայն

26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 652։
27 Նույն տեղում։
28 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 328։
29 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 43։

$2^1/_2$ տարի, այլև $2^1/_2$ ամիս էլ չէինք կարող երկիրը կառավարել և դիկտատուրան իրագործել»[30]։

Վ. Ի. Լենինը հսկայական նշանակություն էր տալիս արհմիություններին նոր հասարակարգի կառավարման գործում։ 1920—1923 թթ. իր զեկուցումներում, ճառերում, հոդվածներում և աշխատություններում Վ. Ի. Լենինը բազմիցս անդրադարձել է արհմիությունների հարցին, մատնանշել և լուսաբանել նրանց խնդիրները սովետական երկրի տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ։

1921 թ. սկզբներին, տնտեսական դժվարություններին զուգընթաց, ծագում են քաղաքական բնույթի լուրջ դժվարություններ։ 1920 թ. վերջերին և 1921 թ. սկզբներին տատանումներ են դրսևորվում կուսակցության անկայուն անդամների, մինչև անգամ զեկավար աշխատողների որոշ մասի մոտ։ Դա դրսևորվում է նաև սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում արհմիությունների ունենալիք դերի հարցում։ Կուսակցությունը արհմիությունների միջոցով պետք է մոբիլիզացներ բանվոր դասակարգի ուժերը տնտեսական շինարարության խնդիրների լուծման համար, մինչդեռ քաղաքացիական պատերազմի ընթացքում արհմիությունները զգալիորեն թուլացել էին։ Կուսակցության առջև խնդիր է ծառանում՝ ամրապնդել արհմիությունները, բարձրացնել նրանց դերն ու հեղինակությունը։ Անհրաժեշտ էր արհմիությունների աշխատանքը վերակառուցել խաղաղ պայմաններին համապատասխան։ 1920 թ. նոյեմբերին Համառուսաստանյան արհմիութենական V կոնֆերանսում կուսակցությունն առաջ էր քաշել արհմիություններում աշխատանքի զինվորական մեթոդներից հրաժարվելու և ծավալուն դեմոկրատիայի անցնելու խնդիրը, որի դեմ հանդես էր եկել Տրոցկին։ Վերջինս ձգտում էր, որ արհմիություններում կիրառվեն հրամայելու և վարչարարության մեթոդներ, որոնք ինքը գործադրում էր երկաթուղայինների և ջրային տրանսպորտի աշխատողների արհմիությունում։

Արհմիությունների հարցն ըստ էության աշխատավոր մասսաներին մոտենալու, նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու եղանակների, մասսաներին զեկավարելու մեթոդների հարց էր։ Վ. Ի. Լենինը նշել է, որ Տրոցկու հետ «իրական տարակարծությունը» արհմիությունների հարցի շուրջը՝ տարակարծություն է «մասսային մոտենալու, մասսային տիրանալու, մասսայի հետ կապվելու մեթոդների հարցում։ Սա է ամբողջ էությունը»[31]։

Արհմիությունների հարցը քննարկվում է կուսակցության Կենտկոմում և ստեղծվում է Կենտկոմի հինգ անդամներից կազմված հանձնաժողով։ Որոշվում է արհմիությունների հարցի վերաբերյալ երևան եկած տարաձայնությունները լայն քննարկման առարկա չդարձնել։ Սակայն Տրոցկին խախտում է որոշումը։ Նա հասարակայնությանը տեղեկացնում է Կենտկոմում եղած տարաձայնությունների մասին և իր համախոհների անունից հայտարարում է Կենտկոմի գծի հետ համաձայն չլինելու մասին։ Կուսակցության Կենտկոմի 1921 թ. հունվարյան պլենումը դատապարտում է Տրոցկու հրապարակային ելույթները։ Կենտկոմի պլենումը թեև դիսկուսիան համարում է

30 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 40։
31 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 6։

վնասակար, բայց Տրոցկուն զինաթափ անելու համար այնուամենայնիվ որոշում է դիսկուսիա բացել։

Դիսկուսիայի ժամանակ երևան են գալիս նաև այլ օպոզիցիոն պլատֆորմներ՝ «բանվորական օպոզիցիայի» խումբը՝ Շլյապնիկովի գլխավորությամբ, «դեմոկրատական ցենտրալիզմի» խումբը՝ Սապրոնովի գլխավորությամբ, «բուֆերային» խումբը՝ Բուխարինի գլխավորությամբ։

Հանդես գալով դրանց դեմ, Վ. Ի. Լենինն ապացուցում է, որ սոցիալիստական տնտեսության կառավարման գործում արհմիությունների գլխավոր ֆունկցիաները նրանց մասնակցությունն է սովետական պետության պլանային և տնտեսական օրգաններում, պայքարն աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և աշխատանքային կարգապահությունը ամրապնդելու համար, ղեկավար կադրերի պատրաստումն ու առաջքաշումը բանվորներից և առհասարակ աշխատավորական մասսաներից։ Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ արհմիությունների գործունեությունը պետք է արտահայտվի բանվորական դեմոկրատիայի լայն ծավալման մեջ, բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարում, նրանց անդամների դաստիարակության և ստեղծագործական ակտիվության բարձրացման մեջ։

Սուր և արտակարգ բնույթ ստացած դիսկուսիայում հաղթանակում է արհմիությունների վերաբերյալ լենինյան տեսակետը։ Կուսակցության X համագումարը (1921 թ. մարտի 8—16) ամփոփելով արհմիությունների հարցի վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները, ընդունեց լենինյան պլատֆորմը, դատապարտեց տրոցկիստների, «բանվորական օպոզիցիայի», «դեցիստների» ու օպորտունիստական մյուս բոլոր խմբերի հայացքները և նշեց արհմիությունների գործունեության հիմնական խնդիրները։ Հատկապես ընդգծվեց, որ բանվորական դեմոկրատիայի մեթոդները, որոնք խիստ սահմանափակվել էին քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում, հարկավոր է առաջին հերթին և ամենից լայն կերպով վերականգնել արհմիութենական շարժման մեջ։ Արհմիությունները պետք է կառուցված լինեն դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով, նրանց աշխատանքին պետք է ուղղություն տա կոմունիստական կուսակցությունը։ Արհմիությունների դերի ու խնդիրների մասին համագումարի ընդունած բանաձևում ասված է. «Արհմիությունների արագ պետականացումը խոշոր քաղաքական սխալ կլիներ հենց այն պատճառով, որ դա զարգացման տվյալ ստադիայում ամենամեծ չափով կխանգարեր արհմիությունների կողմից վերոհիշյալ խնդիրների կատարմանը։

Արհեստակցական միությունների այժմյան դրությունը Սովետական Ռուսաստանում պետության նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքի իմաստով յուրահատուկ է։ Արհեստակցական միությունները արդեն տվյալ մոմենտին էլ կատարում են զուտ պետական օրգանների որոշ ֆունկցիաներ (տարիֆների մշակում, արտահագուստի բաշխում և այլն)։ Սովետական պետության մեջ արհեստակցական միությունների այդ պետական ֆունկցիաները հետզհետե ավելանալու են։ Բայց համագումարը, այնուամենայնիվ, մատնանշում է, որ արհմիությունների պետականացման տեմպի ամեն մի արհեստական արագացում, ամենևին չբարելավելով հանրապետության տնտեսական դրությունը, կհասցներ այն բանին, որ արհմիությունների՝ որպես կոմունիզմի դպրոցի, դերը կդժվարանար։ Խնդիրն այն է, որ իրականում Սովետական պետության համար հետզհետե ավելի ու ավելի նվաճենք այդ մասսայական անկու-

սակցական կազմակերպությունները, թողնելով նրանց այն կազմակերպությունների բնույթը, որոնց մեջ ազատ կերպով մտնում են տարբեր քաղաքական հայացքների ու տրամադրությունների տեր, ինչպես կուսակցական, այնպես էլ անկուսակցական, գրագետ և անգրագետ, կրոնապաշտ և ոչ-կրոնապաշտ բանվորներ և այլն»[32]։

Համագումարի կողմից ընդունված լենինյան դրույթները մինչև օրս պահպանում են իրենց ուժը, դրանք մեր օրերում ևս ղեկավար սկզբունք են արհմիությունների գործունեության մեջ՝ կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարում։ Այժմ սովետական արհմիությունները, ղեկավարվելով ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական որոշումներով, որոնց հիմքում դրված են լենինյան գաղափարները, պայքարում են նոր հնգամյա պլանների գերակատարման և կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի հարստացման համար։

РАЗВИТИЕ В. И. ЛЕНИНЫМ МАРКСИСТСКОГО УЧЕНИЯ О РАБОЧИХ ПРОФСОЮЗАХ

М. С. СОГОМОНЯН

Резюме

Развивая учение К. Маркса и Ф. Энгельса, В. И. Ленин рассматривал рабочие революционные профсоюзы как важнейшее орудие классовой борьбы, призывал их бороться за решение не только экономических, но и политических задач. В. И. Ленин научно обосновал историческую необходимость и неизбежность возникновения революционных профсоюзов в капиталистическом обществе.

Опираясь на учение К. Маркса и Ф. Энгельса об общественно-экономических формациях, В. И. Ленин развил и обогатил марксовы идеи о профсоюзах, их исторической роли и задачах новыми положениями и выводами.

32 «ՍՄԿԿ-ն բանաձևերում», մաս I, Երևան, 1954, էջ 687։